STATE OF WASHINGTON
DEPARTMENT OF SOCIAL AND HEALTH SERVICES
DIVISION OF CHILD SUPPORT (DCS)

Երեխայի օգնության հրամանի վերանայման պահանջ
Child Support Order Review Request

ՀԱՍՑԵԱՏԵՐ՝

ԹԵՄԱ՝

ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ՝

ԱՄՍԱԹԻՎ՝

Տեղեկություններ ծրագրի մասին

Դուք խնդրել եք, որ Երեխաների Օգնության Բաժինը (DCS) փոփոխի (փոխի) կամ ճշգրտի երեխայի օգնության ձեր հրամանը: Դուք երկու տարբերակ ունեք, որոնք կօգնեն ձեզ փոփոխել կամ ճշգրտել ձեր հրամանը՝

1. Հայց ներկայացնել դատարան՝ ձեր հրամանը փոփոխելու նպատակով: Դուք կարող եք դա ինքներդ անել կամ փաստաբանի միջոցով:
2. Խնդրել DCS-ին վերանայել ձեր հրամանը:
   ա. DCS-ն չի կարող ձեզ կամ ձեր հրամանի մյուս կողմին ներկայացնել կամ տրամադրել իրավական խորհուրդ:
   բ. DCS-ն վերանայում է ձեր տեղեկությունները:
      (1) Եթե ձեր հրամանը **չի** համապատասխանում վերանայման նվազագույն չափանիշներին, ապա DCS-ն այլևս ոչինչ չի անի:
      (2) Եթե ձեր հրամանը **համապատասխանում է** վերանայման նվազագույն չափանիշներին, DCS-ն կուղարկի ձեր գործը Մեղադրող Փաստաբանի գրասենյակ կամ երեխաների օգնության այլ գործակալություն (ըստ անհրաժեշտության) փոփոխման կամ ճշգրտման համար: Նվազագույն պահանջներն են՝
         (ա) DCS-ն պետք է ունենա հրամանի երկու կողմերի ներկայիս հասցեների մասին տեղեկություն:
         (բ) Վաշինգտոն նահանգը պետք է իրավասություն ունենա հրամանի երկու կողմերի նկատմամբ:
         (գ) Պետք է անցած լինի առնվազն երեք տարի օգնության քանակի վերջին հաստատումից հետո **կամ** դուք կարող եք ցուցադրել հանգամանքների կտրուկ փոփոխություն:
         (դ) Առկա հրամանում նշված օգնության ընդհանուր քանակը պետք է կազմի առնվազն 25 տոկոսից ավել կամ պակաս այն քանակից, որը հաստատվել է ամենաթարմ ***Վաշինգտոն Նահանգի Երեխաների Օգնության Ժամանակացույցով*** **և** տարբերության քանակը ներկա օգնության քանակի ու նոր քանակի միջև պետք է լինի առնվազն ամսական $100.00:
         (ե) Օգնության ընդհանուր քանակը մինչև հրամանի ժամկետի լրանալը պետք է փոփոխվի առնվազն $2,400.00-ով:

         ԱԿՆԱՐԿ. վերոնշյալ վերջին երկու չափանիշները կարող են բացառվել, երբ հրամանը չի պահանջում առողջապահական ապահովագրում տրամադրել երեխաներին:

Եթե հրամանում նշված երեխաները ստանում են հանրային օգնություն կամ բժշկական օգնություն, ապա կիրառելի են հատուկ կանոններ:

1. DCS-ն ավտոմատ կերպով կվերանայի ձեր հրամանը փոփոխությունների կամ ճշգրտումների համար ամեն 35 ամիսը մեկ:
2. Եթե ցանկանում եք փոփոխել կամ ճշգրտել ձեր հրամանն առանց DCS-ի օգնության, ապա կամ Մեղադրող Փաստաբանի գրասենյակը, կամ DCS-ն պետք է հաստատեն հրամանի պայմանները՝ Վաշինգտոն նահանգում նշանակված երեխաների օգնության համար:

Եթե ցանկանում եք, որ DCS –ն վերանայի ձեր հրամանը, դուք պետք է լրացնեք ու վերադարձնեք այս ձևի 2-րդ ու 3-րդ էջերը: Տեսեք 2-րդ էջում տրված ցուցումները լրացուցիչ պահանջների համար:

STATE OF WASHINGTON
DEPARTMENT OF SOCIAL AND HEALTH SERVICES
DIVISION OF CHILD SUPPORT (DCS)

Երեխայի օգնության հրամանի վերանայման պահանջ
Child Support Order Review Request

ՊԱՀԱՆՋՈՂԻ ԱՆՈՒՆ՝ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ՝

Ցուցումներ

Եթե ցանկանում եք, որ DCS-ն վերանայի ձեր գործը հնարավոր փոփոխությունների կամ ճշգրտումների համար, ապա օգտագործեք այս ձևը՝ վերանայում խնդրելու համար:

Ձեր ստորագրությունից բացի, տպատառերով գրեք ձեր պատասխանները: Օգտագործեք միայն սև կամ կապույտ թանաք:

Ստորագրեք և վերադարձրեք բոլոր պահանջվող ձևերը DCS-ի հասցեով, որը նշված է 3-րդ էջում: Եթե դուք երեխաների օգնության գործակալություն եք, ապա ձևերը պետք է ստորագրի լիազորված ներկայացուցիչը:

Լրացրեք և վերադարձրեք հետևյալ ձևերը՝

1. Այս ձևի **2-րդ ու 3-րդ էջերը:**
2. ***Վաշինգտոն Նահանգի Երեխաների Օգնության Ժամանակացույցի Աշխատաթերթերը*** (կցված են): Լրացրեք ձեր ու ձեր կենցաղի մասին հատվածները: DCS-ն կփորձի ձեռք բերել մյուս կողմի ֆինանսական տեղեկությունները:
3. ***Ֆինանսական Հռչակագիրը*** (կցված է): Լրացրեք այս ձևը միայն, եթե **դատարանի հրաման** ունեք:
4. ***Գաղտնի Տեղեկության*** ձևը (կցված է): Լրացրեք այս ձևը միայն, եթե **դատարանի հրաման** ունեք:
5. ***Գաղտնի Տեղեկության*** ձևի ***Հավելվածը*** (կցված է), եթե երկու երեխայից ավել ունեք: Լրացրեք այս ձևը միայն, եթե **դատարանի հրաման** ունեք:

Կցեք հետևյալ փաստաթղթերը: **Եթե չունեք այս փաստաթղթերը, ապա հայտարարագիր կցեք՝ բացատրելով, թե ինչու չունեք:**

1. Դաշնային եկամտահարկի վերջին երկու հաշվետվության պատճենները:
2. Ձեր վերջին երեք աշխատավարձի չեքերի կտրոնները:

DCS-ն կամ Մեղադրող Փաստաբանը կարող են բացահայտել DCS-ին ձեր ուղարկած որևէ փաստաթուղթ ձեր օգնության հրամանի մյուս կողմին և կարող են գրանցել փաստաթղթերը հանրային դատական ֆայլում:

1. Ձեր օգնության հրամանի մյուս կողմն իրավունք ունի տեսնել ձեր ֆինանսական տեղեկությունները:
2. Դուք պետք է ջնջեք ձեր անձնական իդենտիֆիկացման տեղեկությունը (հասցե, ծննդյան ամսաթիվ, սոցիալական ապահովության համար) բոլոր փաստաթղթերից, նախքան դրանք DCS-ին ուղարկելը:

Ես ցանկանում եմ, որ DCS-ն վերանայի իմ օգնության հրամանը փոփոխություն կամ ճշգրտում կատարելու համար, որովհետև (նշեք ձեր գործին կիրառելի վանդակները ներքևում)՝

1. ☐ Իմ եկամուտը փոխվել է:
2. ☐ Մյուս ծնողի եկամուտը փոխվել է:
3. ☐ Իմ գործի առնվազն մեկ երեխաներից մեկը՝
   - ա. ☐ Տասներկու տարեկան է կամ ավելի մեծ: Սա տարբերվում է ներկա հրամանից:
   - բ. ☐ Ապրում է այլ տանը:
   - գ. ☐ Դպրոց չի հաճախում կամ տանը չի ապրում:
4. ☐ Իմ հրամանին պետք է ավելացվեն առողջապահական ապահովագրման պահանջները:
5. ☐ Ես հաշմանդամ եմ, գտնվում եմ բուժհաստատությունում կամ բանտում:
6. ☐ Այլ (բացատրեք)՝ _____

Ես հասկանում եմ և համաձայն եմ, որ՝

1. Եթե ես չտրամադրեմ DCS-ին բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, DCS-ն չի վերանայի իմ հրամանը:
2. DCS-ն միայն վերանայում է իմ գործը դրույթների փոփոխության կամ ճշգրտման համար՝ կապված երեխաների օգնության կամ երեխաների առողջապահական ապահովագրման հետ: DCS-ն իրավասու չէ վերանայել դատական հրամանները՝ կապված խնամակալության, այցելությունների ու այլ խնդիրների հետ:
3. DCS-ն օգտագործում է իմ տրամադրած տեղեկությունները երեխաների օգնությունը հաստատելու, փոփոխելու կամ հարկադրելու համար:
   ա. DCS-ն կիսում է տեղեկություններն այլ պետական գործակալությունների հետ միայն այս նպատակներով:
   բ. DCS-ն բացահայտում է տեղեկությունները միայն այնպես, ինչպես թույլ են տալիս նահանգային և դաշնային օրենքներն ու կանոնները:
   գ. Ես կարող են պահանջել DCS-ից մյուս ծնողի անձնական ու գաղտնի տեղեկությունները:
4. Իմ խնդրանքը վերանայելուց հետո, DCS-ն կուղարկի այն Մեղադրող Փաստաբանին, եթե՝
   ա. DCS-ն ստանում է 3-րդ էջում պահանջված բոլոր ձևերն ու տեղեկությունները:
   բ. Իմ գործը համապատասխանում է փոփոխության կամ ճշգրտման պահանջներին:

   ԱԿՆԱՐԿ. DCS-ն չի կարող հետ վերցնել Մեղադրող Փաստաբանին ուղարկված հայցերը:
5. Եթե իմ հրամանը չի համապատասխանում իրավական կամ վերանայման պահանջներին, ապա DCS-ն կամ մեղադրող փաստաբանը կարող են որոշել դատարան չներկայացնել իմ օգնության հրամանը՝ փոփոխության կամ ճշգրտման համար:
6. Եթե մեղադրողը որոշում է ընթացք տալ իմ օգնության հրամանի փոփոխությանը կամ ճշգրտմանը, ապա որևէ փոփոխության ուժի մեջ մտնելու ամսաթիվը կարող է լինել ցանկացած ամսաթիվ՝ սկսած դատարան գործի ներկայացման ամսաթվից մինչև դատավորի կողմից հրամանի ստորագրման ամսաթիվը: Դատավորն է որոշում ուժի մեջ մտնելու ամսաթիվը:
7. Իմ փոփոխված կամ ճշգրտված օգնության հրամանը կարող է հանգեցնել օգնության ավելի մեծ կամ փոքր վճարումների:
8. Ես իրավունք ունեմ ինքնուրույն խնդրել, որ դատարանը փոփոխի կամ ճշգրտի իմ օգնության հրամանը:

_____	_____
ԱՄՍԱԹԻՎ	ԾՆՈՂԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
_____	_____
ԱՄՍԱԹԻՎ	ԾՆՈՂԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
	_____
	ԾՆՈՂԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԱՆՈՒՆԸ ՏՊԱՏԱՌԵՐՈՎ

DIVISION OF CHILD SUPPORT
PO BOX 11520
TACOMA WA 98411-5520

_____ տարածքի ներսում զանգահարեք՝ _____
_____ տարածքից դուրս զանգահարեք՝ _____

TTY/TDD ծառայությունները մատչելի են խոսքի կամ լսողության խնդիրներ ունեցողների համար:
Այցելեք մեր կայքը՝ www.dshs.wa.gov/dcs

Այս ծրագրի աշխատանքի ընդունելության, ծառայությունների կամ այլ բնագավառների շրջանակներում խտրականություն չի դրվում անձի ռասայի, գույնի, ազգային ծագման, հավատքի, կրոնի, սեռի, տարիքի կամ հաշմանդամության հիման վրա: Պահանջի դեպքում այս ձևը տրամադրվում է այլընտրանքային ֆորմատներով:

For Child Support Agency Use Only (Միայն երեխաների օգնության գործակալության օգտագործման համար)			
AGENCY REPRESENTATIVE'S SIGNATURE		DATE	
AGENCY P.O. BOX OR STREET ADDRESS	CITY	STATE	ZIP CODE